

ակնոցներով, երբ այդ հայրենիքը կը վերածընէր, — կը վերածնէր Թուրքաց Հայաստանը, տակաւին լեցուն հայերով եւ հայկական Վերագարթնումի ու սրարչաւ յառաջդիմութեան թոհուրոհին մէջ շատ քիչերը կ'անդրադառնային համիտեան օրերու նախճիրներուն վրայ...

Մինչ Պրէսսանսէ, Քիլեառ եւ ուրիշներ կը մասնակցէին հրապարակային ցոյցերու, միթիւնկներու, ի նպաստ հայոց, երբեմն նոյնիսկ Ճրանսայէն դուրս, Կլէմանսօ խիստ սակաւ կ'ենէր իր աշխատանքի առանձնասենեակէն: Անոր հետ յարաբերութիւն կը պահպանէր Քիլեառ. երբեմն կ'երթար եւ ըստ. Լորիս-Մելիքեան*):

Յօդուածիս առաջին բաժնին մէջ յիշեցինք արդէն Կլէմանսօյի դղրդազին յօդուածաշարքը համիտեան ոսկիներու եւ փարիզեան մեծ մամուլի կաշառակերութեան մասին: Չենք յիշատակեր այն բոլոր յօդուածները, որոնց մէջ շեփորածայն հրապարակախօսը տասնեակ տարիներու ընթացքին փաստարաններ է հայկական դատը ընդդէմ արիւնոտ բռնակալութեան:

Ի՞նչ ըրաւ սակայն, Կլէմանսօ 1917-էն ի

*) Մեր ընկերներէն մէկուն տպուած յայտարարութիւնը, թէ իբր այդ վերջինը կը ղեկավարէր հայասիրական շարժումը «Քրիստափորի անմիջական հսկողութեան տակ» — հեռուոր կերպիւ անգամ չի համապատասխաներ իրականութեան: Նախ «Պրօ Արմենիա»ն հիմնուելէն քիչ յետոյ Քրիստափոր վերադարձաւ Կովկաս «Փոթորիկ»ի գործով (1901-ի աշնան սկիզբներուն): Նորէն ժընեւ եկաւ 1903-ի ամառը եւ քանի մը ամիս յետոյ հաստատուեցաւ Բալքաններու մէջ, ուր եւ մեռաւ: Ապա, ինչ կը վերաբերի Լորիս-Մելիքեանին (անոր ըրած ծառայութիւնները հանգամանօրէն ցուցադրուած ենք «Հայրենիք»ի մէջ) — ան երբեք ոչինչ չէ ղեկավարեր: Միեւնոյն է թէ ըսել՝ Տիգրան Նազարեան մը ղեկավարեր է ոուսահայոց լըրագրական կամ կրթական շարժումը... Պատմութիւնը, մանաւանդ կուսակցութեան պատասխանատու օրգաններու մէջ, գրելու է ըստ կարելոյն ճշգրիտ ձեւով: Վայրիվերոյ, ինդատիւրուած պատմութիւնները ոչ ոքի համար արժէք չունին:

վեր, երբ մեծ պատերազմին յաղթանակի դափնիներով շրջապատուած, դարձաւ տեսակ մը համաշխարհային իրաւարար, իրեւ նախագահը Սաղաղութեան Վեհաժողովին: Ո՛չ մի տարակոյս. հայկական դատի հինաւուրց պաշտպանը միանգամայն բարեացակամ սրտով մօտեցաւ այդ դատին, որ հայոց այնքան աղէտներէն ու պայքարներէն յետոյ, Հայկական Հանրապետութիւնը ստեղծուելէն վերջ, սուր կերպով ցցուեր էր Վեհաժողովին առջեւ: Երբ Հայաստանի ծանր օրերուն մեր դրացիները փակեցին Բաթումի նաւահանգիստը, Կլէմանսօ Վեհաժողովին անունով ազդու հեռագիր մը ուղղեց վրացական կառավարութեան:

Պահե՞ց արդեօք նախագահը նոյն բարեացակամ տրամադրութիւնը մինչեւ վերջ... Ստուգիւ չենք գիտեր: Կոահումներու, նպատակուոր եւ աննպաստ վարկածներու մշուշին մէջ ենք: «Ըսի-ըսաւ»ներ... Հայ պատգամաւորները խիստ սակաւ մուտք ունէին ծերունի նախագահին քով, որ իր երկարատեւ կեանքին մէջ դուրսէ երբեք չէր եղած սիրալիր ու քաղցրաբարոյ: Օր մը, ընդունելով հայ ներկայացուցիչ մը, դեռ վերջինը բերան չբացած, կ'ըսէ անոր. «Գիտեմ, դիտեմ, լուսինը կ'ուզէք, աստղերը կ'ուզէք»...

Կ'ըսուի, օրինակ, թէ Կլէմանսօ սրանեղած էր հայերէն, վասնզի անոնք Կիլիկիան կ'ուզէին կցել անկախ Հայաստանին, մինչ Ճրանսան ալ շտտոնց ուզած էր դրաւել այդ համեղ երկրամասը եւ կցել զայն Սիւրիոյ ոսկորոտ ու աւագոտ մարմնոյն: «Սիւրիան ոսկորն է, Կիլիկիան՝ մկանունքը», կ'ըսէր «Թան»ի այն օրերու արտաքին բաժնին լաբագիրը: Երբեք: Կլէմանսօ, անշուշտ, լաւ տեղեակ էր հայ մտաւորականութեան «մեծամասնական» maximaliste) ախորժակներուն, որոնք ազատօրէն կ'արտայայտուէին մեր փարիզեան «ազգային» համազումարին մէջ, ուր ամերիկեան մանդատէն թեւաւորուած, ոչ միայն Կիլիկիան կը պահանջէինք, այլ եւ անգամ կեսարացի հայրենակիցները չէին կրնար երեւակայել անկախ Հայաստան առանց Կեսարիոյ... Կլէմանսօ իրազեկ էր, վասնզի կային պատուական հայրենակիցներ նոյն Ազգային Համազումարին մէջ, որոնք խնամքով կը տեղեկազրէին մեր